Հաստատված է «Ուրարտու» համալսարանի
գիտական խորհրդի 2014թ. օգոստոսի 25-ի նիստում

Ռեկտոր՝ Ս.Ա.Սեդրակյան

ԿԱՐԳ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ,ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ)

- Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի սկզբունքներից է, որ ակադեմիական գերազանցությունը ազատություն է պահանջում: Ազնվությունը և ներգրավվածությունը ազատության նախապայմաններն են: Սա նշանակում է, որ «Ուրարտու» համալսարանի կրթական համայնքի ներկայացուցիչները հարգում են միմյանց ակադեմիական աշխատանքը և ճանաչում մտավոր սեփականության որոշակիացման և պաշտպանման կարևորությունը:
- «Ուրարտու» համալսարանի կրթական կառույցի ներկայացուցիչները կիսում են համապատասխան պարտավորություններ, որոնցից մեկը ազնիվ հաղորդակցության մեջ լինելն է:
- Ակադեմիական անազնվությունը վստահության լուրջ չարաշահում է, որից կախված է «Ուրարտու» համալսարանի կրթական հանրույթը:
- «Ուրարտու» համալսարանը մշակել է ակադեմիական անազնվության կանխարգելման ընթացակարգ, որին խստագույնս հետևում է «Ուրարտու» համալսարանի կրթական համայնքը և որը բնորոշում է «Ուրարտու» համալսարանի ակադեմիական ազնվության քաղաքականությունը:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

- «Ուրարտու» համալսարանի դեկանը յուրաքանչյուր նոր աշխատակցի, կամ ուսանողի ներկայացնում է վարքային դրսևորումները, որոնք կարող են չարաշահել «Ուրարտու» համալսարանի կրթական կառույցի վստահությունը:
- Դեկանը, նշելով, որ ակադեմիական անազնությունն ունի տարաբնույթ դրսևորումներ, ներկայացնում է վերջինիս բնորոշ հետևալ վարքային դրսևորումները.

ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ: Այլ անձ/անձանց մտավոր սեփականության անօրինական օգտագործումը որևէ աշխատանք իրականացնելիս (օրինակ, ուսանողների պարագայում՝ քննության ընթացքում այլ ուսանողի աշխատանք ներկայացնելը որպես սեփական), քննության ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների անօրինական օգտագործումը, քննական նյութերից օգտվելը, այլ ուսանողի հետ քննական նյութը քննարկելը, այլոց հուշելը, երբ դա անթույլատրելի է, դասախոսի

կողմից ուսանողի ոչ օբյեկտիվ գնահատումը, այլ դասընթացի շրջանակներում արդեն ներկայացված աշխատանքը առանց դասավանդողի իմացության ներկայացնելը, յուրաքանչյուր քայլ ձեռնարկելը անօրինական ճանապարհով աշխատակցի, կամ այլ ուսանողի նկատմամբ գերակա լինելու նպատակով:

ԿԵՂԾՈՒՄ: Հավաքագրման անընդունելի միջոցներով ստացված տեղեկատվության ներկայացում որպես վավերական, այլ անձանց փոխարեն ներկայացում, այլ անձանց հեղինակության անհիմն չարաշահում:

ՆՅՈՒԹԵՐԻ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԵՂԾՈՒՄ: Կազմակերպական պաշտոնական նյութերի, կամ փաստաթղթերի դիտավորյալ անօրինական կիրառություն, վնասում, ստորագրությունների կեղծում:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱՋՆՎՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ: Իմանալով ակադեմիական անազնվության վարքային դրսևորումները՝ թույլատրել, կամ ինչ-որ կերպ աջակցել այլ անձանց դրանք ցուցաբերել:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԴԻՏԱՎՈՐՅԱԼ ՔՈՂԱՐԿՈՒՄ: «Ուրարտու» համալսարանի կրթական կառույցին տեղեկատվական կարևոր աղբյուրները չներկայացնելը, քանի որ այդ աղբյուրները տալիս են գիտական և/ կամ կրթական առավելություններ նրան, ում համար դրանք հասանելի են՝ չհանդիսանալով նրա մտավոր սեփականությունը;

- «Ուրարտու» համալսարանի դեկանը յուրաքանչյուր նոր աշխատակցի, կամ ուսանողի զգուշացնում է , որ ակադեմիական անազնվություն դրսևորելը պատժելի է:
- Եվ ուսանողին, և «Ուրարտու» համալսարանի այլ ներկայացուցիչների տրվում են գրավոր նկատողություններ, որոնցում հստակ նկարագրվում է նրանց կողմից դրսևորած անազնիվ վարքը: Յուրաքանչյուր գրավոր նկատողության ներքևում ստորագրում է անազնիվ վարք դրսևորած անձը՝ հաստատելով, որ դրանում առկա նկարագրությունը ճշմարիտ է: Երեք գրավոր նկատողություն ունեցող յուրաքանչյուր «Ուրարտու» համալսարանի ուսանող կարող է հեռացվել համալսարանից;
- Ուսանողը, ակադեմիական անազնվություն դրսևորելու պարագայում, կարող է կրկնել դասընթացը, մնալ նույն կուրսում, դուրս մնալ «Ուրարտու» համալսարանից:

ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱՐԳ

ՍԱՀՄԱՆՈՒՄ: Գրագողությունը այլ անձի /անձանց հեղինակային մտքի/երի ու գաղափարների, ինչպես նաև այդ մտքերի, գաղափարների նյութական դրսևորումների յուրացումն է՝ դրանք ներկայացնելով որպես սեփական:

- Գրագողության կանխարգելումը ենթադրում է.
- Վերջինիս պատճառների հասկացում,
- Վերջինիս տիպերի հասկացում
- Այդ պատճառների չեզոքացում,տիպերի դրսևորման կանխարգելում:

ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ: Գրագողությունը տեղի ունի, երբ առանց հղում անելու նույնությամբ օգտագործվում, կամ փոփոխության է ենթարկվում այլ անձանց աշխատանքի

- Կառուցվածքը
- Իմաստը
- Հեղինակային աշխատանքի առանձին տարրերի փոփոխությունը նույնանման, կամ նույնիմաստ տարրերով չեն չեզոքացնում գրագողության առկայությունը:
- Գրագողությունը տեղի ունի, երբ այլ անձի մտքերն ու գաղափարները, ինչպես նաև այդ մտքերի, գաղափարների նյութական դրսևորումները օգտագործվում են
- Առանց նշելու դրանց աղբյուրը
- Առանց հղում անելու դրանց հեղինակներին
- Այդ հեղինակի այն աշխատանքին, որում դրանք առկա են
- Առանց նշելու դրանց տպագրման, պատենտավորման, կիրառման վայրն ու տարեթիվը
- Նշելով վերջիններիս աղբյուրը, սակայն միայն դրանց մի մասի, կամ տարրի առնչությամբ
- Նշելով վերջիններիս աղբյուրը ոչ գրագետ կերպով (չպահպանելով հղում անելու կարգը), կամ էթիկան (թույլ տալով տառասխալներ, մտքի սխալներ և այլն):

ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՈՒՄԸ

- Սեփական աշխատանքն իրականացնելիս միշտ էլ կարելի է և անհրաժեշտ է օգտվել այլ անձանց աշխատանքներին, սակայն պետք է ստեղծել ամբողջությամբ նոր և յուրահատուկ աշխատանքներ՝կատարելագործելով վերլուծական ունակությունները, գրագիտորեն կիրառելով այլ հեղինակների կողմից առաջարկվող նյութերը, ունենալով սեփական հետազոտական ներդրումը:
- Այլ անձանց աշխատություններից օգտվելիս, փորձագետների կարծիքը հաշվի առնելիս, այլ հետազոտողների կողմից առաջարկվող նյութերը կիրառելիս անհրաժեշտ է նշել աղբյուրներ՝ համապատասխանաբար

օգտագործելով հղումներ անելու համընդհանրորեն ընդունելի ձևաչափեր (օրինակ, MLA-ը, APA-ը):

- Գրագետ հղումներ իրականացնելու համար «Ուրարտու» համալսարանի յուրաքանչյուր ներկայացուցիչ կարող է դիմել «Ուրարտու» համալսարանի հետազոտության և զարգացման կենտրոն՝ խորհրդատվության համար:

ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԸ:

Տեքստի/ բառերի յուրացում տեղի ունի, երբ, առանց հղում անելու , կամ ոչ ճիշտ հղումով, կիրառվում է այլ հեղինակների ստեղծած տեքստերը, կամ բառերը նույնությամբ, կամ նույնիմաստ այդ տեքստի, բառերի ստեղծմամբ:

Կառուցվածքի յուրացում տեղի ունի, երբ, առանց հղում անելու, կամ ոչ ճիշտ հղումով, վերաշարադրվում է այլ անձանց կողմից արդեն իսկ կիրառված աշխատանքի կառուցվածքը՝ այն միայն կառուցվածքային փոփոխության ենթարկելով, կամ փոխելով բառերի դասավորությունը:

Հեղինակային կարգավիճակի յուրացում տեղի ունի, երբ այլ անձանց կողմից հեղինակած աշխատանքները ներկայացվում են որպես սեփական:

Գրագողություն, որը վերաբերում է սեփական անձին տեղի ունի, երբ նույն անձինք իրենց հեղինակած որևէ աշխատանքների մեջ առկա բառեր, մտքեր, գաղափարներ, նախադասությունների կառուցվածքներ, կիրառում են իրենց իսկ՝ այլ աշխատանքներից ՝ չնշելով դրանց առաջնային աղբյուրը:

ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Գրագողության բացահայտման պարագայում յուրաքանչյուր նյութ, որի նկատմամբ այն բացահայտվել է համարվում է անվավեր, կանխարգելվում է այդ նյութի ստեղծման և տարածման ընթացքը: Գրագողություն իրականացրած անձինք ստանում են գրավոր նկատողություն, երեք նկատողությունից ավելի ստացած անձինք կարող են հեռացվել «Ուրարտու» համալսարանից:

Ուսումնառության մեջ գրագողությունը պատժվում է հետևյալ հիմնական միջոցներով՝

- Ուսանողը 0 բալ է ստանում իր ներկայացրած նյութի համար,
- Ուսանողը նոր նյութ է ներկայացնում
- Ուսանողը ձախողում է իր կողմից առարկայի ուսանումը, որի շրջանակներում գրագողությամբ է զբաղվել և ստիպված է լինում այն կրկնել,
- Ուսանողը հեռացվում է «Ուրարտու» համալսարանից: